



Մրցույթ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների լրագրողների համար

Արևելյան գործընկերության Քաղաքապետերի դաշնագրի (CoM East) նախագիծը հայտարարում է լրագրողական հոդվածների մրցույթ էներգաարդյունավետության, կլիմայի փոփոխության հետևանքների և դրանց մեղմացման կամ դրանց հարմարվելու ուղիների մասին: Քաղաքապետերի դաշնագրի (CoM East) նախագիծը հրավիրում է Արևելյան գործընկերության երկրներում գործող լրագրողներին մրցույթի շրջանակներում ներկայացնել իրենց հոդվածները կամ ռեպորտաժները: Նյութերի ներկայացման վերջնաժամկետն է՝ ա.թ. հոկտեմբերի 30-ը:

Մրցույթի հաղթող կճանաչվեն Արևելյան Գործընկերության անդամներին՝ Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի, Ադրբեջանի ու Մոլդովայի 25 լրագրող՝ 5 մասնակից յուրաքանչյուր երկրից և 25 լրագրող Ուկրաինայից:

Մրցույթի հաղթողները հնարավորություն կստանան մասնակցել ա. թ. նոյեմբերին Մոլդովայի Հանրապետության մայրաքաղաք Կիշնևում կայանալիք երկօրյա Միջազգային Մեդիա Մեմինարին, որը նվիրված կլինի կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության միջոցառումների, CO2 նվազեցման և էներգաարդյունավետության բարձրացման հարցերին: Հանդիպման ընթացքում ԵՄ Արևելյան Գործընկերության երկրների զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները կձանոթանան վերոհիշյալ խնդիրների լուծման շուրջ ներկա իրավիճակին, կքննարկեն հանրային իրազեկման մարտահրավերները:





Մրցույթի մասնակցության կանոններ՝

I. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Մրցույթի կազմակերպիչ՝ «Քաղաքապետերի Դաշնագիր Արևելք» ԵՄ ծրագիրը (COM -East):

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն Մրցույթի նպատակն է ընտրել էներգետիկայի եւ բնապահպանության հարցերով հետաքրքրված 25 լրագրող Ուկրաինայից եւ հնգական լրագրող Հայաստանից, Ադրբեջանից, Բելառուսից, Վրաստանից եւ Մոլդովայից, ԵՄ Արևելյան Գործընկերության Մեդրա Սեմինարում մասնակցության համար: Մրցույթը ուղղված է խրախուսելու տպագիր և էլեկտրոնային ՋԼՄ-ների, ռադիոյի և հեռուստատեսության լրագրողների հետաքրքրվածությունը Քաղաքապետերի Դաշնագրի ստորագրող տեղական համայնքների կողմից իրականացվող կայուն էներգետիկայի զարգացման ծրագրերի վերաբերյալ:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Մրցույթը բաց է Արևելյան գործընկերության երկրների հեռուստաալիքների, ռադիո, տպագիր և առցանց լրատվամիջոցների լրագրողների, բլոգերների, ազգային, մարզային, տեղական ՋԼՄ-ների թղթակիցների եւ ԲՈւՀ-երի լրագրության բաժինների ուսանողների համար: Մրցույթում կարող են մասնակցել լրագրողական նյութեր՝ հոդվածների կամ նորությունների տեսանյութերի տեսքով:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

4.1. Մրցույթի շրջանակներում մասնակիցները կարող են տրամադրել,

- տպագիր և ինտերնետային ՋԼՄ-ների լրագրողներ՝ Հեղինակային հոդված *.doc ֆորմատով (առավելագույնը՝ 7000 նիշ);
- Հեռուստա/ռադիո տեսանյութեր սկավառակով կամ նյութը բեռնելու հղումով, ինչպես նաև նյութի սղագիրը *.doc ֆորմատով:

4.2. Բոլոր նյութերը պետք է ներկայացվեն մինչ 2017 թվականի հոկտեմբերի 30-ը էլեկտրոնային նամակի տեսքով: Նամակը անհրաժեշտ է ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեներին՝ tatiana.derevyankina@eumayors.eu, artem.kharazyan@eumayors.eu և abegloian@gmail.com

2017 թվականի հոկտեմբերի 30-ից հետո ուղարկված նյութերը Մրցույթում չեն մասնակցի:





4.3. Մրցույթին մասնակցելու համար նյութերը պետք է ներկայացվեն ակնարկի ձևով, «մարդկային պատմության» ձևաչափով, որտեղ թեմային անդրադառնում է ակնարկի հերոսը կամ ինքը՝ հեղինակը): Հոդվածների թեմաները պետք է լուսաբանեն Արևելյան գործընկերության երկրներում էներգիայի արդյունավետության եւ կլիմայի փոփոխության խնդիրները: Օրինակ՝

- տեղական էներգիայի և կլիմայի քաղաքականության մշակում,
- Քաղաքապետերի Դաշնագրի ստորագրող տեղական համայնքների հաջողված պատմություններ,
- Արևելյան գործընկերության երկրների քաղաքապետերի Դաշնագրի ընդլայնված նպատակներ,
- քաղաքներում, տեղական եւ տարածքային համայնքներում էներգաարդյունավետության ոլորտում լավագույն փորձի ներդրման նկարագրություն,
- քաղաքապետերի Դաշնագրի ազգային կամ տարածքային համակարգողների դերը,
- կլիմայի փոփոխության և/կամ հարմարեցման մեղմացման տեղական նախաձեռնություններ, CO2 արտանետումների նվազեցում,
- տեղական կայուն զարգացման համար էներգիայի արդյունավետության կարևորությունը,
- վերականգնվող էներգիայի աղբյուրների ներդրում քաղաքացիների համար,
- քաղաքապետերի համաձայնագրի ազդեցությունը կյանքի պայմանների և կյանքի որակի բարելավման վրա,
- տեղական և տարածքային համայնքներում բնակվող քաղաքացիների, Քաղաքապետերի Դաշնագրի ստորագրող համայնքներում էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացման առավելությունները:

4.4. Մասնակցության յուրաքանչյուր հայտում պետք է ներառված լինեն.

- Մասնակցի անուն ազգանունը, պաշտոնը:
- Այն լրատվամիջոցի անունը, որի հետ համագործակցում է մասնակիցը:
- Մասնակցի էլ. փոստը և հեռախոսահամարը:

4.5. Յուրաքանչյուր մասնակից իր կողմից ստորագրված դիմում է ներկայացնում՝ նշելով իր անունը, ինչպես նաև համաձայնվում է, որ մրցույթային նյութերը հրապարակվեն ԵՄ Քաղաքապետերի Դաշնագրի նախագծի կայքում և ծրագրի պաշտոնական էջում:

4.6. Մրցույթի պահանջներին համապատասխանող բոլոր նյութերը կհրապարակվեն Facebook- ի էջում՝ www.facebook.com/CovenantOfMayorsEast?fref=ts

4.7. Մասնակիցը կարող է ներկայացնել մրցույթից առավելագույնը երեք նյութ:

4.9. Մրցույթին ներկայացված նյութերը չեն վերադարձվում և չեն մեկնաբանվում:





5. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

5.1. Ներկայացված բոլոր նյութերը գնահատվելու են Մրցութային հանձնաժողովի կողմից: Մրցութային անձնակազմում ընդգրկված են «Քաղաքապետերի Դաշնագիր - Արևելք» ծրագրի փորձագետներ, միջազգային մեդիա փորձագետ և Հայաստանյան ծրագրի Ազգային համակարգողի ներկայացուցիչը:

5.2. Մրցութային հանձնաժողովի որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

VI. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մրցութային նյութերը կգնահատվեն հետևյալ չափանիշներով.

- Քաղաքապետերի Դաշնագրի առարկայի համապատասխանությունը՝ որոշիչ չափանիշ:
- IV բաժնում նշված նյութերի հիմնական պահանջներին համապատասխանությունը.:
- Տրամադրված տեղեկատվության որակը և հուսալիությունը:
- Նյութի հասարակական նշանակությունը:
- Շարադրության տրամաբանությունն ու հստակությունը:
- Որքանով է շարադրանքի ոճը բացահայտում թեման մարդու, հեղինակի, համայնքի տեսակետից:
- Ծրագրի պաշտոնական ֆեյսբուքյան էջում (www.facebook.com/CovenantOfMayorsEast?fref=ts) նյութի «Լայքերի» եւ մեկնաբանությունների քանակը կդիտարկվի որպես լրացուցիչ գնահատման գործոն:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

6.1. Նյութերի գնահատումը տեղի կունենա 2017 թ. հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 3-ը:

6.2. Արդյունքները կամփոփվեն ոչ ուշ, քան մինչև 2017 թվականի նոյեմբերի 6-ը- և կհրապարակվեն ծրագրի կայքէջի հասցեով և Ծրագրի www.facebook.com/CovenantOfMayorsEast?fref=ts ֆեյսբուքյան էջում: Հաղթողները կտեղեկացվեն անհատապես:

